

«ԱԼՖԱՍԵԲՅՈՒՐԻԹԻՉ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ղեկավարության հայտարարությունը 2015թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Ալֆասեբյուրիթիզ» ՍՊԸ-ն հավաստիացնում է, որ Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշումով հաստատված Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին, Ներդրումային ընկերությունների հաշվային պլանի կիրառման հրահանգին և ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

«Ալֆասեբյուրիթիզ» ՍՊԸ-ի 2015թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները կազմված են համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվային ակտերի, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ). հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից ընդունված ստանդարտների և դրանց մեկնաբանությունների:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվել և ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի կողմից հաստատված «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլան»-ի և «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգ»-ի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերի: պահական հաշվառման ստանդարտներին և գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերին համապատասխան:

«Ալֆասեբյուրիթիզ» ՍՊԸ-ն ղեկավարությունը պատասխանատվություն է կրում

- 1) Ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, հատկապես.
ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, իրավասու մարմնի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
բ. հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,
գ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
ե. ընկերության գործունեության անընդհատության հիման վրա ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար, ընդ որում ընկերության ղեկավարությունը մտադիր չէ կամ պատճառ չունի դիտարկելու ընկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու հավանականությունը:
- 2) ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,
- 3) ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Գործադիր տնօրեն  Գ.Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ  Կ.Սիմոնյան

